LOS ANGELES THE ARMENIANS

2012 || ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ || հա. 10

ՀԱՅ - ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՄՍԱԳԻՐ | $3.00



Այս համարում՝

Աղասի Խանջյան

Ստալինի ստորգետնյա կյանքը

ՀԱՅ ՋԻՆՎՈՐԸ









Հրատարակիչ՝ **HRD | I.N.N. Media Group**

Գլխ. Խմբագիր՝ Կարո Կարապետյան

Ձևավորումը՝ Դավիթ Վարդանյան

Էջադրումը՝ Սոնա Ոսկերչյան

Տնօրեն՝ Գրիգորի Կարապետյան

I.N.N

HRD | International News Network

I.N.N. Media Group
Գլխ. Խմբագիր՝
Կարո Կարապետյան

Հա. 10
15 Հոկտեմբերի 2012

The Armenians

Այս համարում՝

Աղասի Խանջյան	2
Լուրեր Հայաստանից	4
Բացահայտում	5
Ստալինի ստորգետնյա կյանքը	9
Անհայտ դրվագներ հայտնիների կյանքից	11
Աշխարհի հզոր աղետների պատմությունից	13
Կին և տղամարդ	15
Հասմիկ Պապյան	17
Հետաքրքիր փաստեր	18
Immigration Services	19
Հաշվապահ Դավիթ Այվազյան	20

ԱՂԱՍԻ ԽԱՆՋՅԱՆ

Աղասի Խանջյանը ծնվել է 1901թ. հունվարի 30-ին, Վանում: Սովորել է Վանի Կենտրոնական վարժարանում: 1915թ. ընտանիքի հետ գաղթել է Արևելյան Հա-յաստան: Դեռ տակավին պատանի՝ 1917-ից Աղասի Խանջյանը հեղափոխական գործունեություն է ծավալում: 1921թ. արդեն կուսակցական ղեկավար աշխատանքի է անցել Հայաստանում, 1923թ. Ռուսաստանում՝ հաստատվելով Լենինգրադում: 1928 թ. Աղասի Խանջյանը Կենտկոմի որոշմամբ գործուղվում է Հայաստան, իսկ 1930 թ. ընտրվում է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար: Նա առաջիններից էր, որ լր-ջորեն մտածեց հայրենադարձության գաղափարը կյանքի կոչելու մասին: Սակայն զարգացման հետ մեկտեղ Խանջյանի կառա-վարման էջ 2

Հրատարակիչ՝ HRD | I.N.N. Media Group
Գլխ. Խմբագիր՝ Կարո Կարապետյան
Ձևավորումը՝ Դավիթ Վարդանյան
Էջադրումը՝ Սոնա Ոսկերչյան
Տնօրեն՝ Գրիգորի Կարապետյան

I.N.N
HRD | International News Network

1930-1936թթ. ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարը Աղասի Խանջյանն էր: Հայաստանի համար այդ ծանր շրջանում իրականացվեցին կոլեկտիվացումը, արդյունաբերության ինդուստրացումը: Երկրում ընթանում էր համատարած էլեկտրաֆիկացում. կառուցվեցին Զորահէկն ու Քանաքեռհէկը, արտադրանք տվեցին Վանաձորի քիմիական գործարանը, Արարատցեմենտը: Սկսվեց Երևանի կաուչուկի գործարանի շինարարությունը, առաջընթաց քայլեր արվեցին կրթության և անգրագիտության վերացման ոլորտում. մտցվեց պարտադիր յոթնամյա կրթություն:

Այս տարիներին սկսվեց նաև Երևանի կառուցապատումը Թամանյանի նախագծով:

Աղասի Խանջյանը ծնվել է 1901թ. հունվարի 30-ին, Վանում: Սովորել է Վանի Կենտրոնական վարժարանում: 1915թ. ընտանիքի հետ գաղթել է Արևելյան Հայաստան: Դեռ տակավին պատանի՝ 1917-ից Աղասի Խանջյանը հեղափոխական գործունեություն է ծավալում: 1921թ. արդեն կուսակցական ղեկավար աշխատանքի է անցել Հայաստանում, 1923թ. Ռուսաստանում՝ հաստատվելով Լենինգրադում: 1928 թ. Աղասի Խանջյանը Կենտկոմի որոշմամբ գործուղվում է Հայաստան, իսկ 1930 թ. ընտրվում է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար: Նա առաջիններից էր, որ լրջորեն մտածեց հայրենադարձության գաղափարը կյանքի կոչելու մասին:

Սակայն զարգացման հետ մեկտեղ Խանջյանի կառավարման տարիներին ավելի էր ամրապնդվում վարչահրամայական ապարատը, տեռորը սեփական ժողովրդի հանդեպ, անհատի պաշտամունքը: Ամենուր սարսափ էր տարածված կուսակցության և ՆԳ Ժողկոմի նկատմամբ: Եվ այդ ամենը նաև Աղասի Խանջյանի շնորհիվ, որ Հայաստանում «զորանոցային սոցիալիզմի» ամրապնդման ջատագովներից էր:

Այնուամենայնիվ, Աղասի Խանջյանը ժողովրդի սիրելին էր՝ շնորհիվ իր անհնազանդ բնավորության: Նա ժամանակի բոլշևիկ այն եզակի գործիչներից էր, որոնց համար ազգային արժեքները առավել կարևոր էին, քան նեղ կուսակցական շահերը:

Աղասի Խանջյանը համապատասխան բարձրագույն կրթություն չուներ, բայց ուներ իր ուղեցույցն ու հավատամքը՝ կուսակցությունը: Չնայած երբեմն փորձում էր շտկումներ մտցնել Կենտկոմի հրահանգների մեջ և երբեմն, ի պատիվ իրեն, նաև ըմբոստանում էր: Եվ

շատերը նրան զգուշացնում էին գլխին կախված դամոկլյան սրի մասին:

Կրեմլում վաղուց քննարկումներ էին ընթանում Խանջյանին մեկուսացնելու հարցի շուրջ: Սակայն Բերիան ու Ստալինը դեռևս համապատասխան փաստարկ չունեին «Ժողովրդի թշնամիների» բանակը մի նոր անունով համալրելու համար: Չունեին, որովհետև Խանջյանը մեծ կալիբրի գործիչ էր, այն էլ՝ անհանգիստ Կովկասում: Կար նաև աքսորի տարբերակ՝ նոր աշխատանքի նշանակում Ուրալից այն կողմ:

Նա նաև մի մեծ «բաց» ուներ՝ հայ մտավորականության հովանավորն էր: Հատկապես մտերիմ էր Եղիշե Չարենցի հետ: Հետագայում, Խանջյանի մահից ցնցված, Չարենցը գրեց «Դոֆին Նայիրական» սոնետների շարքը: Խանջյանն առանձնակի մտերմություն ուներ իր համաքաղաքացու (նաև հեռավոր ազգականի)՝ Գուրգեն Մահարու հետ, որին ամենուր պաշտպանում էր հարձակումներից: Երբ Մահարուն արդեն երկրորդ անգամ վտարեցին Հայաստանի պրոլետգրողների միությունից, նա ահավոր անկումային տրամադրություն ուներ և ծանր էր տանում: Նա նաև մեկ այլ մեծ հայի՝ Վարդան Աճեմյանի մորաքրոջ տղան էր: Նա իրեն շրջապատել էր անվանի գրողներով, մտավորականներով և հաճախ էր նրանց հետ գրական երեկոներ կազմակերպում:

Մի խոսքով, Խանջյանից դժգոհ էին հանրապետության ներսում, քանի որ նա Մոսկվայի դրածոն էր և նրա քաղաքականությունն իրականացնողը, դժգոհ էին նաև Կենտրոնում, քանի որ նա ըմբոստ էր ու չէր կամենում Ստալին-Բերիա զույգի հլու կամակատարը լինել: Նրա նկատմամբ նույնիսկ երկու անգամ «հեղաշրջում» կազմակերպեցին, սակայն հաջողություն չունեցան:

Ամեն դեպքում, զգալով իր գլխին կախված սուրը, Խանջյանը ստիպված էր ընդառաջ գնալ ՆԳ Ժողկոմ Մուղդուսուն և ստորագրել «Ժողովրդի թշնամիների» ցուցակի տակ: Ստորագրություն, որով նա հարյուրավորների մահվան ուղարկեց:

Խանջյանից հեռու չէին մարդկային թուլությունները: Նա ևս վարակված էր «Ժամանակի ախտով»՝ քծնանքով: Եվ իր բոլոր ելույթները սկսում ու վերջացնում էր Բերիայի գովքով: Բայց դա չփրկեց նրան: 1936 թ. մայիսին Խանջյանը մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Կոմկուսի կենտկոմի պլենումին: Նրա բացակայության ժամանակ Բերիայի անմիջական ցուցումով Խաչիկ Մուղդուսին, Ակոպովը, Համո Ամատունին ձերբակալությունների շարք սկսեցին Հայաստանում, այն էլ Խանջյանի մերձակա շրջապատի մարդկանցից: Եվ խոշտանգումների միջոցով ցուցմունք կորզեցին նրանցից Աղասի Խանջյանի գլխավորած տրոցկիստական, հակահեղափոխական, ազգայնական խմբակի գոյության մասին: Այս տխրահռչակ եռյակը դեռ ցանկանում էր հաշվեհարդար տեսնել Բակունցի, Ալազանի, Չարենցի հետ ևս, սակայն ինչ-ինչ պատճառներով նրանց վճիռը հետաձգվեց:

Շուտով Խանջյանին կանչեցին Թիֆլիս: Լավրենտի Բերիան իր աշխատասենյակում Խանջյանի դեմ դրեց կորզած ցուցմունքներն ու բացատրություն պահանջեց: Հենց Բերիայի աշխատասենյակում էլ 1936 թ. հուլիսի 9 -ին Աղասի Խանջյանը կասկածելի հանգամանքներում ինքնասպան եղավ: Բերիան ու նրա շրջապատը տարածեցին, թե Խանջյանի ցուցադրական ինքնասպանությունը միտված էր հայ և վրացի ժողովուրդներին գժտեցմանը:

Հետագա օրերին, երբ Խանջյանի դին Երևան բերեցին և դրեցին նրա տանը, նրա անձնական բժիշկ Սաղյանն ու հայտնի վիրաբույժ Միրզա-Ավագյանը, զննելով նրա քունքի վերքերը, եկան եզրակացության, որ դրանք ինքնասպանության արդյունք չեն, այլ կրակել են որոշակի հեռավորությունից: Շատ չանցած նրանք ձերբակալվեցին ու իրենց վախճանը գտան բանտում:

Երբ Խանջյանի դին գնացքով Երևան բերին, Երևանի երկաթուղային կայարանում հազարավոր մարդիկ էին հավաքվել, որոնք, չնայած ոստիկանության արգելքին, դագաղն ուսերի վրա տարան մինչև Խանջյանի տուն ու մի ամբողջ օր սգացին:

Խանջյանն իսկապես ժողովրդի սիրելին էր: Նրա վերջին ճանապարհի ուղեկիցներն էին ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, գրողներ Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Վահրամ Ալազանը, շատ ուրիշներ…

Հուղարկավորությունը «փառահեղ էր»: Հունիսի 12-ի «Խորհրդային Հայաստան» թերթում տեղադրված մահազդը կարծես թե վերաբերում էր մի շարքային քաղաքացու, ոչ թե պետության ղեկավարին: Խանջյանին նրա իսկ դիակի մոտ բազմիցս պիտակավորեցին

որպես «ժողովրդի թշնամի», «դաշնակցական լրտես», «տրոցկիստ», «նացիոնալիստ»… Նրան պաշտոնում փոխարինած Համո Ամատունին անգամ չխորշեց և իր ելույթներից մեկում Խանջյանին անվանեց «վիժվածք»: Նրանից հետ չմնացին Խաչիկ Մուղդուսին և Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Աբրահամ Գալոյանը: Ավելորդ չէ նշել, որ Խաչիկ Մուղդուսու պատվերով Խանջյանի դիակի մոտ անգամ պատվո պահակ չկանգնեցվեց: Դրա փոխարեն Խանջյանի տունը շրջափակված էր ոստիկանության հոծ շղթայով, և հասարակ ժողովրդի մուտքն արգելված էր: Սակայն, մարդիկ, այնուամենայնիվ, ճեղքեցին ոստիկանների շղթան և տուն լցվեցին: Հոգեհանգիստը տարերային բնույթ ընդունեց: Անգամ երեխաները՝ անչափահաս պիոներները կարողացան ներս մտնել ու դագաղը պատել ծաղիկներով: Խանջյանի դիակի քունքերին գնդակների տեղը ծածկելու համար երկու մեծ վարդ էր դրված…

Տեսնելով, որ ժողովրդական հուզումը հասնում է գագաթնակետին՝ զայրացած Խաչիկ Մուղդուսին կարգադրեց դագաղը վերցնել և դուրս հանել տնից:

Դիակը տնից դուրս հանելուց առաջ հանգուցյալի հայրը՝ Ժողովրդական ուսուցիչ Ղևոնդ Խանջյանը, ի լուր ժողովրդի հայտարարեց, որ Աղասին ապրել է ցարի ժամանակ, պայքարել է Դաշնակցության իշխանության օրոք և աննկուն կամք ուներ. ոչ ոք և ոչինչ չէր կարող նրան ստիպել ինքնասպան լինել: Նա հայտարարեց, որ իր որդուն գնդակահարել են: Երբ դիակը դուրս բերեցին տնից, թաղման թափորը փոթորկվեց, հուզվեց… Ամբոխն արդեն անկառավարելի էր դառնում: Ոստիկանությունն այլևս չէր կարողանում զսպել ժողովրդական պոռթկումը: Իշխանությունները դիմեցին ծայրահեղ միջոցի. Խաչիկ Մուղդուսու հրամանով Մամռի ջրանցքի ջրերը բաց թողեցին ուղիղ փողոց՝ մարդկանց վրա: Սակայն դա չխանգարեց թափորին՝ հարգանքի վերջին տուրքը մատուցելու սիրելի գործչին: Նրա դին ամփոփեցին Կոնդի Կոզեռն գերեզմանատանը:

Խանջյանի մահից հետո Հայաստանում կրքերը չհանդարտվեցին: Ամատունին և Խաչիկ Մուղդուսին տարերքի մեջ էին. նրանք ձերբակալում էին ում ասես: Մեղադրանքը մեկն էր՝ ափսոսել էին, ասել է թե՝ համակիր էին Խանջյանին: Նրանք ասպարեզից վերացրին նաև իրենց տասնյակ հակառակորդների և ընդդիմախոսների: Մի քանի ամսում հանրապետությունում «Խանջյանի գործով» բանտարկվեց ավելի քան 8 հարյուր մարդ:

Վահե ԱՆԹԱՆԵՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ծառուկյանը չի առաջադրվի

2012թ դեկտեմբերի 12-ին տեղի է ունեցել ԲՀԿ խմբակցության և քաղխորհրդի համատեղ նիստ: Օրակարգում եղել է մեկ հարց՝ ԲՀԿ մասնակցության ձևաչափը 2013 թվականին կայանալիք ՀՀ նախագահի ընտրություններում: Բացման խոսքում ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը հայտարարել է, որ չի առաջադրելու իր թեկնածությունը: Շնորհակալություն է հայտնել իր գործընկերներին՝ անվերապահ վստահության և աջակցության համար:

ՀԱԿ-ը քննարկել է ԲՀԿ-ի դիրքորոշումը

ՀԱԿ քաղխորհրդի նիստում ի թիվս այլ հարցերի այսօր քննարկվել է ԲՀԿ քաղխորհրդի որոշումը առաջիկա Նախագահի ընտրությունների վերաբերյալ: Նիստից հետո ՀԱԿ խոսնակ Արման Մուսինյանը հայտնեց, քանի որ ստեղծվել է նոր քաղաքական իրավիճակ, խորհրդակցություններից հետո Կոնգրեսը կհայտնի իր դիրքորոշումը: ,Կոնգրեսը քննարկումներ է սկսել երկրում ստեղծված նոր քաղաքական իրավիճակի շուրջ, և քննարկումների արդյունքը կներկայացվի մոտ օրերսե,- "Ա1+"-ին ասաց Արման Մուսինյանը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Վոլֆ Մեսսինգ. ճշմարտություն թե պատրանք

Սկիզբը՝ նախորդ համարում

Շուտով Մեսսինգը մեկնեց սովորելու Վիլնենյան համալսարանի հոգեբանության ֆակուլտետում: Այստեղ նա շատ չմնաց: Փառքը հետապնդում էր նրան:

Գայթակղությունը շատ մեծ էր: Եվ հնարավորությունը լավ վաստակելու՝ նույնպես: Սկսվեցին հյուրախաղերը տարբեր երկրներում, նախ՝ Եվրոպա, Ամերիկա, հետո՝ Ավստրալիա, Ճապոնիա, Արգենտինա, Բրազիլիա

Բացի ելույթներից, որոնք խելահեղ հաջողությամբ էին անցնում, հարկ էր լինում մշտապես որևէ մեկին օգնել: Նրան դիմում էին տարբեր խնդրանքներով՝ գտնել կորած իրը, կամ հանցագործին, օգնել վերադարձնելու գողացվածը: Դիմում էին ազնվականները, ոստիկանությունը, հասարակ մարդիկ…

Մեսսինգը ոչ ոքի չէր մերժում…

1937-ին, Վարշավայում, մի ելույթի ժամանակ նա կանխագուշակեց, որ եթե Հիտլերը մտնի արևելք, ապա շուտով, Ռուսաստանի հետ պատերազմում, նրան պարտություն և մահ է սպասվում: Այս բառերը, բնականաբար, հասան Հիտլերին: Նա Մեսսինգին իր անձնական թշնամին հայտարարեց: Երբ գերմանացիները գրավեցին Լեհաստանը, Մեսսինգի ընտանիքի բոլոր անդամներին՝ հորը, եղբայրներին, մյուս հարազատներին ոչնչացրեցին Մայդանեկում: Նրա նկարները փակցված էին ամենուր: Պարգևատրությունը՝ 200000 մարկ: Եվ այդպես էր ոչ միայն Լեհաստանում, այլև ողջ օկուպացված Եվրոպայում:

Վարշավայում Մեսսինգին բռնեց մի սովորական ոստիկան: Եվ, չնայած այն բանին, որ նա ներկայացավ որպես նկարիչ, սպան ճանաչեց նրան: Մեսսինգը չհասցրեց միացնել իր ներշնչման շնորհը: Նրան տեղամաս տարան: Ուշքի գալով նա արեց այն, ինչ նրան հաջողվում էր նախկինում, ներշնչում՝ առանց կոնտակտի, շփման. մտային հրաման ուղարկեց թիկնապահներին՝ հավաքվել իր խցում: Հետո անմիջապես դուրս եկավ, փակեց խցի դուռը կողպեքով և երկրորդ հարկի բաց պատուհանից՝ թռավ… Այդ գիշեր նա ձկնորսական նավով կտրեց-անցավ Ջապոնի Բուգ գետը և մտավ ՍՍՀՄ սահման: Նր "կնքահայրը" դարձավ Բրեստսկի մարզի կուսակցական մի պաշտոնյա՝ Պյոտր Աբրասիմովը, որի հետ նա հանդիպեց Բրեստսկի մարզում: Մեսսինգը մըտքում աղոթեց. "Հավատա և օգնիր ինձ":

Այսպես սկսվեց Մեսսինգի նոր կյանքը:

Միստիկի կյանքը մի երկրում, որտեղ չէր ընդունվում ոչ մի արտառոց երևույթ:

…Ամեն մի հանդիպում նրա հետ անցնում էր բուռն օվացիաներով:

1940-ի մայիսին, Գոմելում, նրա ելույթներից մեկի ժամանակ, բեմ բարձրացան երկու հոգի: Ներողություն խնդրե-



լով հանդիսականներից՝ ընդհատեցին համերգը…

Մեսսինգին տարան Մոսկվա: Ստալինը ցանկանում էր անձամբ համոզվել նրա առեղծվածային ձիրքի մեջ:

Նրանք զրուցեցին բավականին երկար: Առաջնորդը հետաքրքրվում էր հայտնի մարդկանց հետ նրա հանդիպումներով: Հետո առաջարկեց Մեսսինգին դուրս գալ Կրեմլից՝ առանց անցաթղթի:

- Եթե կարող ես, դուրս արի,- ասաց նա՝ ուղեկցելով Մեսսինգին պատուհանի մոտ,- կանգնիր ահա այն փայտի մոտ:

Նա դուրս եկավ Կրեմլից այնպես, ինչպես դուրս են գայիս մետրոյից: Կանգնեց փայտի մոտ, շրջվեց դեպի պատուհանը: Ստալինը ձեռքով արեց՝ վերադարձեք:

Երբ նա, հանգիստ անցնելով թիկնապահների մոտից, մտավ առանձնասենյակ, առաջնորդը հարցրեց. "Ինչպե՞ս դա ձեզ հաջողվեց":

- Ես ներշնչեցի թիկնապահներին, որ ես Բերիան եմ:

Մի ուրիշ փորձարկում էլ անցկացրեց արդեն Լավրենտի Պավլովիչը:

→

Հայտնի պատմություն է. պետք էր խնայդրամարկղից ստանալ 100000 ռուբլի: Գանձապահը վերցրեց նրա ձեռքից դատարկ թղթերի կույտը և հաշվեց: Բերիայի մարդիկ արձանագրություն կազմեցին, և փողերը վերադարձրին գանձապահին, որին էլ այդ պահին կաթված խփեց…

Զարմանալի չէ՞, որ Ստալինը իր կասկածամտությամբ հանդերձ՝հանդուրժեց գոյությունը մի մարդու, որն ընդունակ էր կարդալու ուրիշի մտքերը: Նշանակում է՝ և իր մտքերը: Ուղղակի չէր հավատում, որ ինչ-որ մեկը կհամարձակվեր: Ինչ-որ արտիստ: Մեսսինգի հիպնոսի շնորհը նրան չէր հետաքրքրում: Ինքն էլ ուներ այդ շնորհը: Այդ մասին խոսում էին բոլորը, նույնիսկ՝ Չերչիլը: Պայծառատեսությո՞ն, դե ինչ, կարելի է երբեմն կիրառել: Լավրենտին կզբաղվի նրանով: Ապագայի կանխագուշակու՞մ: Ապուշությո՞ն: Հրեական հիմարություննե՞ր:

Առաջնորդի հետ Մեսսինգը ուրիշ հանդիպումներ էլ է ունեցել: Հայտնի է, որ հանդիպումներից մեկի ժամանակ Մեսսինգը մի հարցում նախազգուշացրեց առաջնորդին. Ստալինի որդին `Վասիլին, ոչ մի դեպքում չպետք է հոկեիստների թիմի հետ թռչի Սվերդլովսկ: Հոր կամքով Վասիլին ստիպված եղավ մեկնել գնացքով…

Ինքնաթիռը, որի մեջ էր թիմը, կործանվեց. բոլոր հոկեիստները զոհվեցին:

1943 թվականին, Նովոսիբիրսկում, Մեսսինգը կանխագուշակեց, որ պատերազմը կավարտվի հաղթանակով 1945 թվ. մայիսի 8-ին: Ստալինը նրան հեռագիր ուղարկեց՝ շնորհակալություն հայտնելով ճշգրիտ կանխագուշակման համար:

Ի՞նչ գիտենք մենք ժամանակի մասին, ուղեղի վրա նրա ունեցած ազդեցության մասին հարցերին՝ Մեսսինգը պատասխանեց. “Կարծում եմ, որ կան հատման կետեր անցյալի, ներկայի և ապագայի միջև: Երբ ուղեղը մեծ տարածություն է ընդգրկում, կարող է և տրամադրվել այդ ուղղությամբ: Այդ դեպքում դա կդիտվի որպես թռիչք մի այլ ժամանակի մեջ: Ավելին ասել չեմ կարող…”:

Ինչպես կարելի է, Մոսկվայում նստած “տեսնել” հարյուրավոր կիլոմետրեր այն կողմ գաղտնի փաստաթղթերով կորած պայուսակ (Բերիան էր դիմել նրան ՝ օգնության խնդրանքով): Պայուսակը գտան Մեսսինգի նշած տեղում:

Մի անգամ Մեսսինգը չկարողացավ մերժել բժիշկ-նյարդաբանին, որը տևական ժամանակ հետևել էր նրա ելույթներին. թույլ տվեց իրեն հետազոտել: Բժշկին զարմացրել էր, որ Մեսսինգի կրծքավանդակի և գլխի շրջանում չկային այնպիսի տաք զգացողություններ, ինչպիսին կային մարմնի մնացած մասերում...

1948 թվական: Աշխաբադ: Հենց առաջին օրը, փողոցում քայլելիս նա հանկարծ զգաց, թե ինչպես է իրեն տագնապը պատում: Ոչ մի պատկեր չծագեց նրա մեջ: Բայց ինչ-որ մի ցավ, մղկտոց զգաց, և ոչ մի կոնկրետ բան, բացի՝ անմիջապես հեռանալու անսովոր ուժեղ ցանկությունից: Այդ զգացողությունը ուժեղանում էր րոպե առ րոպե: Նա կյանքում առաջին անգամ ընդհատեց ելույթն ու վերադարձավ Մոսկվա:

… Երկու օր հետո Աշխաբադն ավերվեց երկրաշարժից … Ոչ կանխագուշակումը, ոչ նախազգացողությունը չէին կարող այն ժամանակ նրան հուշել, որ իմաստ չունի հրաժարվել համառ առաջարկից՝ զոհաբերել իր ոչ քիչ խնայողությունները կործանիչների վրա: Նա հրաժարվեց և ձերբակալվեց: Հենց առաջին հարցաքննության ժամանակ նրան մեղադրանք ներկայացրին՝ լրտեսության համար (Գերմանիայի օգտին): Մնում էր համաձայնվել և տալ միլիոնը: Բայց նա բանտից դուրս եկավ կոտրված և վերջնականապես ընկճված, վախեցած: Այսօր հայտնի է, որ առաջին բանտարկությունից հետո Մեսսինգը կորցրեց հետաքրքրությունը խնայդրամարկղի նկատմամբ և սկսեց իր հոնորարները ներդնել թանկարժեք քարերի վրա:

Պատերազմ էր, և փողը արժեք չուներ:

Բայց ճակատագիրը մի անակնկալ էլ էր պահել նրա համար՝ Միջին Ասիայում, օկուպացիայի ժամանակ, հանդիպեցնելով լեհ էմիգրանտ Աբրամ Կալինսկուն:

Մեսսինգը տեղի տվեց նրա հորդորին՝ փախչել չեզոք Իրան: Հաջողության հետևից գնալ: Գայթակղությունը մեծ էր… Բայց ու՞ր էր կորել նրա՝ կանխագուշակողի ձիրքը… “Խելքը թռցրել էր ծերուկ-թուրքմենը, որը համաձայնվել էր խոշոր գումարով (40 հազար) ուղեկցող դառնալ: Կամ, որն առավել հավանական է, ինքը՝ Կալինսկին էր պատճառը, որը, ինչպես պարզվեց շատ ուշ, ՆԳ աշխատակից էր… Մեսսինգին նորից ձերբակալեցին: Այս անգամ ամեն

ինչ ավելի լուրջ էր: Նրան օգնեց գրպանում գտնված Ստալինի փրկարար հեռագիրը, ինչպես նաև՝ նրան փրկեց ռազմաճակատին ինքնաթիռներ նվիրելու սովորությունը: Այդպես՝ երկինք մխրճվեց նրա երկրորդ կործանիչը, որը նվիրել էր "Վարշավա" ինքնաթիռային գնդին: Եվ նա դադարեց իր հոնորարները ներդնել ադամանդների, թանկարժեք քարերի վրա…

Ապրելով 75 տարի՝ նա այդպես էլ չմեծացավ, ներքուստ մնաց նույն տղան՝ հրեական գավառից: Նա տեսնում էր ապագան, բայց չէր կարող փոխել այն: Նա լավ էր հասկանում դա: Եվ երբ ես, չհամբերելով, խնդրեցի նրան ասել, թե ի՞նչ է ինձ սպասվում, նա լռեց, կնճռոտվեց, հետո բորբոքված, բարկացած բղավեց. "Երբեք և ոչ մեկին չհարցնեք այդ մասին: Ոչ մեկին և երբեք: Մարդ չպետք է իմանա ապագան: Այդպիսի գիտելիքը կարող է ճակատագրական դառնալ":

Ի տարբերություն մեզանից յուրաքանչյուրի՝ Մեսսինգը գիտեր օրն ու ժամը իր մահվան: Բայց ինչպես մենք՝ բոլորս, ինքն էլ էր վախենում էր դրանից…

Աղաչեց իշխանություններին իր հաշվին հրավիրել արդեն այն ժամանակ հանրահայտ Դեբեյկինին, որը բառացիորեն այն աշխարհից ետ կբերեր ԽՍՀՄ ԳԱ նախագահ Կելդիշին: Նրան մերժեցին:

Ասում են՝ հիվանդանոց գնալիս նա շրջվեց իր տան կողմը և կամաց, արցունքները հազիվ թաքցնելով, ասաց. - Ահա և բոլորը, Վոլֆ: Դու այլևս այստեղ չես վերադառնա:

Այդպես էլ եղավ: Զստային առրտայի վիրահատությունը փայլուն անցավ: Անհանգստանալու պատճառ չկար:

Բայց՝ հանկարծակի երիկամները դադարեցին գործելուց… 1974 թվ. նոյեմբերի 8-ի գիշերը Մեսսինգը մահացավ…

Սպասված միլիոնները չհայտնաբերվեցին:

Խնայդրամարկղում եղած 94 հազար ռուբլին պետությանը մնաց: Անգին, անտիկ ֆոլիանտը (կես թերթի ծավալով գիրք) գողացել էր հարևանուհին: Երևի անհետացած հանելուկային սնդուկն էլ (արկղիկը) նույն ճանապարհով էր գնացել: Վալենտինա Իոսիֆովնա Իվանովսկայան, որպես հիշատակ, վերցրեց հյուրասենյակում դրված նրա դիմաքանդակը: Խոշոր ադամանդյա քարով մատանին (700000 արժողությամբ), որի մասին 22ուկներ էին գնում, այդպես էլ չգտան:

Մեսսինգը հեռացավ՝ իր հետ տանելով իր ուղեղի առեղծվածը, ուղեղ, որը հերձելուց պարզվեց այնպիսին էր, ինչպես մյուսներինը: Միայն այստեղ ենք մենք ինքնատիպ, ամեն մեկս՝ յուրովի: Այնտեղ բոլորը միատեսակ են: Միայն հիշողությունն է մեր մասին տարբեր…

Թաղված է Վոլֆ Մեսսինգը Վոստրյակովյան գերեզմանոցում՝ իր կնոջ կողքին: Մտերիմների խնդրանքը՝ հատկացնել 2000 ռուբլի գերեզմանաքար կանգնեցնելու համար, իշխանությունները մերժեցին:



Մեսսինգի աճյունը երկար տարիներ, փաստորեն, մնացել էր անանուն, խոտածածկ էր եղել ու կմոռացվեր, եթե 1990-ին Լոս-Անջելեսից հատուկ այդ նպատակով չգար նրա հին բարեկամուհին և իր միջոցներով չկանգնեցներ համեստ հուշարձան:

LIFESTYLE

Բրազիլիայում դագաղում պառկած երեխան կենդանացել է, մի բաժակ ջուր խնդել, ապա կրկին մահացել

Բրազիլիայի Բելեմ քաղաքում 2-ամյա տղան իսկական խուճապ է առաջացրել, երբ դագաղում կենդանացել է, մի բա-ժակ ջուր խնդրել և վայրկյաններ անց կրկին անշնչացած ընկել, գրում է Daily Mail-ը: Թեև երեխան թոքաբորբի դեմ համապատասխան բուժում է ստացել, այնուամենայնիվ բժիշկներին չէր հաջողվել փրկել նրա կյանքը:

Ծնողները տղայի դին դրել են դագաղի մեջ, որպեսզի ժամեր անց տանեն գերազմանատուն: Սակայն երեխայի անհավանական կենդանացումից հետո բոլորն ուղղակի ապշել են և վախից և զարմանքից սկսել ճչալ:

Մահացած երեխան հանկարծակի նստել է դագաղում և

փակ աչքերով ասել. «Հայրիկ, ինձ մի բաժակ ջուր կտա՞ս»: Առանց հոր պատասխանին սպասելու՝ նա «կրկին» մահացել է: Միջադեպից հետո ծնողներն անմիջապես բժիշկ են կանչել՝ հույս ունենալով, որ իրենց երեխային դեռ կարելի է կյանքի կոչել: Սակայն ապարդյուն. բուժզննումից հետո բժիշկն ասել է, որ երեխան մահացած է: Անկախ բժշկի ասածից ծնողները հետաձգել են տղայի թաղումը՝ հույս ունենալով, որ նա կարող է կրկին կենդանանալ: «Մի պահ ինձ թվաց, թե հրաշք է կատարվել և երեխաս կրկին ողջ է, սակայն նա որքան անսպասելի կենդանացավ, նույնքան անսպասելի էլ մահացավ»,- ասել է տղայի հայրը՝ Անտոնիո Սանտոսը:

Անդամալույծ մարդը միայն ձեռքերի օգնությամբ նվաճել է Կիլիմանջարոն

31-ամյա կանադացի Սփենսեր Ուեսթը, ով մանուկ հասակում կորցրել է ոտքերը, ի վիճակի է եղել նվաճել աշխարհի ամենաբարձր գագաթներից մեկը՝ Կիլիմանջարոն, գրում է UK News-ը:

Երբ բժիշկները 5 տարեկանում հեռացրել են նրա ոտքերը, խորհուրդ են տվել տղային քաջություն ունենալ և հնարավորինս չընկճվել այն հագամանքից, որ ինքն այլևս հասարակության լիիրավ անդամ չի լինելու: Այդ պահից սկսած Ուեսթն իր կյանքի յուրաքանչյուր օրը փորձել է ամեն ինչ անել՝ մարդկանց հակառակն ապացուցելու համար:

Ուեսթը կարողացել է հաղթահարել 5 895 մետր բարձրությունը 7 օրվա ընթացքում՝ օգտագործելով միայն ձեռքերը:

Կիլիմանջարոն նվաճելու համար նա 1 տարի շարունակ մարզվել է և հունիսի 12-ին իր 2 մտերիմ ընկերների հետ միասին ճանապարհ ընկել:

«Լեռան գագաթին հասնելուց հետո ինձ մոտ կախարդական մի զգացողություն էր առաջացել: Կարծում եմ, որ արժեր արյունոտել ու վնասել ձեռքերս այս հրաշքը տեսնելու համար: Կիլիմանջարոն բարձրանալու գաղափարը ոչ թե սկսզբունքի հարց էր, այլ պարզապես ես ցանկանում էի օրինակ ծառայել մյուսների համար՝ իրենց ճանապարհին առաջացած դժվարություններն ու խոչնդոտները հաղթահարելու հարցում»,- նշել է Ուեսթը:

Քևին Քոսթների հարևանը դատի է տվել դերասանին



Ամերիկյան Սանտա Բարբարայում բնակվող հանրահայտ դերասան Քևին Քոսթների հարևանը դատի է տվել դերասանին, հայտնում է Life News-ը:

Հայցվոր Ռիք Գրիմը պատմել է, որ իր տնից հիասքանչ տեսարան էր բացվում դեպի լողափ, որն այլևս չկա՝ «շնորհիվ» դերասանի: Նրա խոսքով՝ իր «խելագար» հարևանն իր տան բակում բարձր ծառեր է տնկել, որոնք էլ փակել են հիասքանչ տեսարանը:

Վրդովված հարևանը փորձել է խնդիրը հարթել խաղաղ ճանապարհով՝ նրան ուղարկելով բուսականությունից ազատվելու մասին խնդրանք-նամակներ: Սակայն դերասանը, փոխարենը, ավելի բարձր ծառեր է տնկել:

Նա պահանջում է կտրել ծառերը, հակառակ դեպքում՝ տրամադրել 650 հազ դոլար՝ բարոյական վնասի համար:

THE ARMENIANS
ԱՄՍԱԳԻՐ
Ձեռք բերեք բոլոր հայկական խանութներից

էքսկլուզիվ

Ստալինի ստորգետնյա կյանքը

70 տարի առաջ, 1941 թվականի աշնանը, Մոսկվան ակտիվորեն պատրաստվում էր տարհանման:

Ֆաշիստական զորքերը հոկտեմբերի կեսին Սովետական Միության մայրաքաղաքից ընդամենը տասնըհինգ կիլոմետր հեռավորության վրա էին եւ կարող էին տանկային ճեղքում կատարել, ինչը կհանգեցներ Մոսկվայի գրավմանը: Հոկտեմբերի 15-ին տարհանման որոշում կայացվեց:

Քաղաքից շտապ կարգով հանվում էին արդյունաբերական ձեռնարկություններն ու հաստատությունները:

Ժողովրդական կոմիսարիատները հեռանում էին՝ թողնելով կառավարման փոքրիկ օպերատիվ խմբեր:

Հոկտեմբերի 16-ը դարձավ այն եզակի օրը, երբ մոսկովյան մետրոն չէր գործում, չէին աշխատում նաեւ տրամվայներն ու ավտոբուսները: Խուճապ սկսվեց...

Հարյուր հազարավոր մարդիկ փախչում էին քաղաքից: Երկաթուղային կայարանները շրջափակված էին զորքերով. գնացքներին մոտ էին թողնում միայն նրանց, ովքեր հատուկ անցաթղթեր ունեին: Փախստականների հիմնական մասը ոտքով շարժվում էր նախկին Վլադիմիրյան մեծուղիով: Քաղաքում չէին գործում խանութները, դրանց մեծ մասը թալանված էր: Հազարավոր մարդիկ այդ օրերն վառում էին իրենց կուսակցական տոմսերը:

Առաջինը վտանգված մայրաքաղաքից փախան կուսակցության Կենտկոմի աշխատակիցները, որոնք շարքային մոսկվացիներից շուտ էին տեղեկանում, թե ինչ է կատարվում ռազմաճակատում: ՆԳԺԿ 1-ին բաժնի պետի տեղակալ Նիկոլայ Շադրինը հոկտեմբերի 20-ին անվըտանգության ժողկոմ Մերկուլովին զեկուցում էր, որ Կենտրոնական կոմիտեում չկա գոնե մի մարդ, որը կկարողանար այրել գաղտնի փաստաթղթերը, ամբողջ տնտեսությունը թողնված է առանց հսկողության, հրշեջ խումբը նույնպես փախել է՝ անտեր թողնելով սարքավորումները, աշխատասենյակներում կատարյալ քաոս է, ջարդված են սեղաններն ու գզրոցների կողպեքները, հատակին թափված են դրոշմաթղթեր ու գաղտնի փաստաթղթեր, հույժ գաղտնի նիշով փաստաթղթերի հինգ թղթապանակ է հայտնաբերվել Ժդանովի՝ անտերության մատնված առանձնասենյակում...

Կենտկոմի ապարատի աշխատակիցները, բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ Քաղբյուրոյի որոշ անդամներ Կույբիշեւ ժամանեցին արդեն հոկտեմբերի 17-ին:

Նրանց թվում էին Կալինինը, Վորոշիլովը, Անդրեեւը, Գորկինը, Շկիրյատովը, Վոզնեսենսկին: Կույբիշեւ տարհանվեց նաեւ Կոմինտերնի գործադիր կոմիտեն՝ Գեորգի Դիմիտրովի գլխավորությամբ:

Կառավարական կառաշարը օդից պահպանում էին մի քանի կործանիչ ավիագնդեր: Կույբիշեւ ուղարկվեցին նաեւ Ստալինի գրադարանը, ամբողջ հանդերձապահարանն ու երեք ավտոմեքենա...

Առաջնորդը՝ գետնի տակ

Բնակչության մեծ մասը համոզված էր, որ Ստալինը լքել է Մոսկվան: Նա իրոք լրջորեն մտադրվել էր հեռանալ քաղաքից: Բայց՝ մնաց...

Գլխավոր քարտուղարի անվտանգության ապահովման ու տարհանման հարցերը բազմիցս քննարկվել էին "իրավասու մարմինների" կողմից: Գոյություն ունեն մի քանի պաշտոնական ու ոչ պաշտոնական վարկածներ, թե 1941 թվականի աշնանը որտեղ էր թաքնվել Ստալինը, նաեւ՝ ինչպես եւ ուր պիտի մեկներ՝ երկրի հետագա կառավարումը շարունակելու համար...

Ժամանակակիցների հուշերում առաջինը "հայտնվեց" Ստալինի ռմբապաստարանը Կրեմլում, որը կառուցված էր 1-ին մասնաշենքի հենց նրա բնակարանի տակ:

Ռմբապաստարանի գոյությունը կասկած չի հարուցում:

Կան բազմաթիվ վկայություններ: Վերը հիշատակված Ն. Շադրինը "Պատերազմական Մոսկվա: 1941-1945 թթ: Հուշեր եւ արխիվային փաստաթղթեր" գրքում հիշում է Քաղբյուրոյի անդամների համար ռմբապաստարաններ կառուցելու մասին. "1941 թ. վերջին սկսեցին Կրեմլում ապաստարան կառուցել Ստալինի համար:

Լավն էր, ընդարձակ. ոչ մի ռումբ չէր հասնի...:

Գրող Կոնստանտին Սիմոնովը գրի է առել ծովակալ Հ. Իսակովի պատմածը: Իսակովը 41-ի ձմռանը հաճախ էր լինում Ստալինի ստորգետնյա առանձնասենյակում ու հիշել էր. "Ուշագրավ է, թե իրենից ինչ էր ներկայացնում այդ սենյակը: Մուտքը սովորական էր, բետոնապատ, դրա համար նախատեսված բոլոր հարմարանքերով, բայց երբ միջանցքից մտնում էիր բուն առանձնասենյակ, կարծես հայտնվում էիր ոչ թե ներքեւում, այլ վերեւում: Դա ճիշտ Ստալինի կրեմլյան աշխատասենյակի պատճենն էր, բայց՝ կրկնակի փոքր:

Մի ուշագրավ մանրամասն "Լուբյանկան Մոսկվայի համար ճակատամարտի օրերին" գրքից հարց է հարուցում՝

մար ճակատամարտի օրերին” գրքից հարց է հարուցում՝ արդյո՞ք Կրեմլում եւս մեկ ռմբապաստարան չի եղել՝ նախքան այս մեկի կառուցումը:

1941 թ. հոկտեմբերի 10-ին Կրեմլի պարետ Ն. Սպիրիդոնովը զեկուցագիր է ուղարկում ՍՍՀՄ ՆԳ ժողկոմի տեղակալ Ի. Սերովին՝ իրազեկելով Կրեմլի կենսապահովման օբյեկտների ականապատման մասին:

Փաստաթղթում հեռախոսակայանի, ջրհան կայանի, կաթսայատան ու էլեկտրակայանի հետ հիշատակվում է նաեւ ռմբապաստարանը: Սակայն ըստ ժամանակակիցների՝ Ստալինի բնակարանի տակ ռմբապաստարան կառուցվել է ավելի ուշ՝ 1941-ի դեկտեմբերին...

Այս “հակասությունը” լուծվում է այն վկայություններով, որ տվել են երկար տարիներ Կրեմլն ու նրա ներքնահարկերն ուսումնասիրած իրազեկ մասնագետները:

Նրանք նշում են, որ պատերազմը սկսվելուն պես ռմբապաստարանի է “վերառակվել” 14-րդ մասնաշենքի նկուղը: Այն լիարժեք ռմբապաստարան համարել չէր կարելի. ծածկերը բարակ էին, իսկ խորությունն ընդամենը չորս մետր էր: Այնպես որ, նույնիսկ 200-կիլոգրամանոց ռումբի ուղիղ հարվածը կարող էր ավերել ներքնահարկը: Ռմբապաստարանը պահպանում էր ընդամենը բեկորներից:

Ստալինյան եւս մեկ գետնահարկ կառուցվեց Վոլինսկի ամառանոցում: Մերձակա ամառանոցի բաղնիքի հարեւանությամբ գտնվող բլուրը, որը պահպանվել է նաեւ 70 տարի անց, այդ ռմբապաստարանի մուտքերից մեկն է:

Տասնյոթ մետր խորության վրա գտվող այդ շինության կառուցումը սկսվեց դեռեւս պատերազմից առաջ, 1940 թվականին, եւ իրականացվում էր հայտնի մետրոշինարար Տատյանա Ֆյոդորովայի ղեկավարությամբ:

Շինարարությունն ավարտվեց պատերազմի սկզբից ութ ամիս անց, 1942 թ. մարտի 7-ին:

Ստալինյան բունկերն այն ժամանակների համար բավական լավ պաշտպանված շինություն էր եւ կարող էր դիմանալ ծանր ավիացիոն ռումբի ուղղակի հարվածին: Բունկերը կառուցված էր երկաթբետոնից, իսկ որպես ծածկ թուջե ռելսեր էին օգտագործվել: Ստալինի Մերձակա ու Հեռավոր ամառանոցների նմանությամբ՝ այս ռմբապաստարաններում կառուցվել էր միջանցքների ցանց, որը առաջնորդին մեկուսացնում էր սպասարկող անձնակազմից:

Ռմբապաստարանը լիարժեք պայմաններ էր ապահովում աշխատանքի համար: Ընդարձակ սրահում, որը երեսպատված էր նույնպիսի փայտե վահանակներով, ինչպիսիք օգտագործվել էին Մերձակա ամառանոցում, հրավիրվում էին աշխատանքային հանդիպումներ եւ նույնիսկ Պաշտպանության պետական կոմիտեի նիստերը:

Հարեւանությամբ փոքրիկ ննջարանն էր:

Պատմական ուղեցույցում Մերձակա ամառանոցի մասին նշվում է, որ բունկերում նույնպիսի բազմոցներ էին դրված, ինչպիսին հիմնական շինություններում էին, աչքի էր ընկնում առյուծակերպ ոտքերով զանգվածեղ սեղանը:

Բունկերը նախատեսված էր ինքնաբավ կենսագործունեության համար, եւ, ինչպես պնդում են Մերձակա ամառանոցի աշխատակիցները, էլեկտրասնուցում ապահովող դիզել-գեներատորը, չնայած “պատկառելի տարիքին” (արտադրվել է 1939 թվականին) կարելի է այսօր էլ աշխատեցնել: Ռմբապաստարանը հիմա էլ կարող է դիմանալ ծանր ավիառումբի ուղիղ հարվածին, սակայն միջուկային հարվածից պահպանել, հասկանալի է, այլեւս չի կարող...

Շարունակելի

Անհայտ Դրվագներ Հայտնիների կյանքից

Բրիթնի Մերֆի

Բրիթնիի մահից մեկ տարի անց, նրա մայրը խոստովանել է, որ մինչև հիմա չի համակերպվում աղջկա կորստի հետ՝ պատկերացնելով որ նա ողջ է: Շերոնը պահպանել է աղջկա ննջասենյակը այնպիսին ինչպիսին նրա կյանքի օրոք էր, ինչպես նաև անցկացնում է օրերը հոգ տանելով և խնամելով Բրիթնիի շանը՝ Կլառային:

Բրիթնի Մերֆին (Brittani Murphy 1977-2009) ծնվել է 1977 թվականի նոյեմբերի 10-ին, Ջորջիա նահանգի Ատլանտա քաղաքում: Փոքրիկ Բրիթնին սկսել է խոսալ վեց ամսեկանից, 1 տարեկանում երգում էր, 3 տերեկանում կարդում, իսկ դերասանական արվեստով սկսեց զբաղվել 9 տարեկանից: Ծնողների՝Շերոն Մերֆիի և Անջելո Բերտոլոտտիի (վերջինս մաֆիայի անդամ էր, ունեցել է մի քանի դատվածություն) բաժանումից հետո աղջնակին մնում է մոր ազգանունը, որը շատ տարիներ հետո նա անմահացնում է:

Տեղափոխվելով Նյու Ջերսի, Բրիթնին հաճախում է Հերբերտ Գուվերի անվան դպրոցը: Առաջին անգամ իր դերասանական տաղանդը նա ցույց է տալիս 9 տարեկան հասակում՝ տեղական թատրոնում: 4 տարի անց նա պայմանագիր է կնքում դերասանական գործակալության հետ և նկարահանվում մի քանի հեռուստատեսային գովազդներում:

Մոր հետ միասին Կալիֆորնիա տեղափոխվելուց հետո սկսնակ դերասանուհին դեր է ստանում «Блоссом» հեռուստաշոուում: Մի շարք սերիալներում՝ Фрейзьер , Мерфи Браун, Паркер Льюис не теряется, Подводная Одиссея, Семейные Молитвы, դերերից հետո Բրիթնի Մերֆին սկսեց շատ հաջողակ կինոկարիերա՝ նկարահանվելով տարբեր ժանրերի ֆիլմերում: Նրան միշտ աջակցում էր մայրը՝ Շերոնը, ով ունենալով բավականին լավ աշխատանք, առանց երկար մտածելու թողնում է այն՝ իրեն ամբողջովին նվիրելով աղջկան:

Բրիթնիի համար բեկումնային եղավ մեծ էկրանին հայտնված Бестолковый երիտասարդական կոմեդիան, որտեղ նրա դերակատարը գլխավոր հերոսուհուն մարմնավորած Ալիսիա Սիլվերստոունի համադասարանցին և ընկերուհին էր: 1998 թվականին Дэвид и Лиза հեռուստաղրամայում խաղացած գլխավոր կանացի դերի համար նոմինացվել է Young Artists Awards մրցանակին:

Բրիթնի Մերֆին շարունակում էր նկարահանվել ֆիլմերում, որոնցից առավել հայտնի են Прерванная Жизнь, որտեղ նրա խաղընկերուհիներն էին Վայնոնա Ռայդերը և Անջելինա Ջոլին, իսկ 2001 թվականին էկրաններին հայտնված Не говори ни слова թրիլերում նրա խաղընկերն էր մեծն Մայքլ Դուգլասը: Այս ֆիլմից հետո Մերֆին խաղաց գլխավոր հերոսուհու կերպարը հետևյալ ֆիլմերում՝ Восьмая миля (2002), Молодожены, (2003) և Городские девчонки (2003):

Հիանալի խաղացած դերերը Մերֆիի համար կարծես երկրորդ շնչառություն բացեցին: Տաղանդավոր դերասանուհուն սկսեցին առաջարկել իրոք արժանի դերեր:

Այդպես, 2008 թվականին ռեժիսոր Ռոբերտ Ալան Էկերմանը հրավիրեց նրան խաղալու գլխավոր հերոսուհուն՝ Էբբիին Суши girl ֆիլմում, որտեղ Բրիթնին նաև ֆիլմի պրոդյուսերն էր:

2010 թվականին պլանավորված էր Բրիթնիի մասնակցությամբ նկարահանել 4 ֆիլմ, որոնց մեջ էր մտնում Սիլվեստր Ստալոնեի էքշն-պրոեկտը՝ Неудержимые:

Բացի դերասանական մասնագիտությունից, Բրիթնին իրեն փորձում էր նաև երաժշտական ասպարեզում:

Դեռևս 90-ականներին, նա ելույթ էր ունենում որպես մենակատարուհի, իր իսկ ստեղծած Blessed soul ռոք խմբում: Այդ խմբի կատարումը և Բրիթնիի ձայնը կարող եք լսել Прерванная жизнь և Прогулки с парнями на афтомобилях ֆիմերի սաունդթրեքներում: Բացի այդ, դերասանուհին մասնակցել է հայտնի երաժիշտ Պոլ Օկենֆոլդի Faster Kill Pussycat կոմպոզիցիային՝ որպես վոկալիստ: Բրիթնի Մերֆին պաշտում էր ջազը, հատկապես Կոլ Պորտերի կատարումները, ինչպես նաև նրան դուր էին գալիս Բյորկի և Ռոլինգ Սթոունի երգերը:

Դերասանուհու լավագույն ընկերուհիներ էին Վայնոնա Ռայդերը և Դրյու Բերիմորը: Իսկ Բրիթնիի անձնական կյանքը, համենայն դեպս միշտ առնչվել է կինոյի հետ:

→

Դեռ դպրոցական տարիներին Բրիթնին հանդիպում էր Подводная Одиссея հեռուստասերիալի երիտասարդ աստղ Ջոնատան Բռենդիսի հետ: Восьмая миля ֆիլմի նկարահանումների ժամանակ Բրիթնին բուռն սիրավեպ է ունենում ֆիլմի գլխավոր հերոսին մարմնավորած Էմինեմի հետ, սակայն ֆիլմի ավարտից հետո նրանց հարաբերությունները խզվում է: Նրա նոր ընկերը դառնում է հմայիչ Էշթոն Կատչերը, ում հետ Բրիթնին նկարահանվել էր Молодожены ֆիլմում: Երջանիկ զույգին ամենուրեք տեսնում էին միասին, նրանց ընդհանուր ընկերները գտնում էին որ շուտով նրանք կամուսնանան, սակայն բոլորի համար անսպասելի էշտոնը հայտնվեց Դեմի Մուրի ամուսնու կարգավիճակում: Բրիթնին ծանր էր տանում նրա հետ բաժանումը:

2004 թվականի հունվարի 9-ին Մերֆին հայտարարեց իր նշանադրության մասին տաղանդավոր պրոդյուսեր Ջեֆֆ Կվատինեցի հետ: Հարսանիքը այդպես էլ չկայացավ: 2007 թվականի մայիս ամսվան Բրիթնի Մերֆին ամուսնացավ բրիտանացի սցենարիստ և պրոդյուսեր Սայմոն Մոնջեկի հետ: Հարսանիքից հետո, սիրահարները Բրիթնիի մոր՝ Շերոնի հետ միսին ապրում էին Լոս Անջելեսում: Մայր և աղջիկ երբեք իրարից չեն բաժանվել:

2009 թվականի դեկտեմբերի 20-ին, առավոտյան տեղային ժամանակով մոտավորապես ժամը 8-ին, դերասանուհու մայրը հայտնաբերեց Մերֆիին Լոս Անջելեսի իր բնակարանում, ջրացնցուղի տակ՝ անգիտակից վիճակում:

Շերոնը միանգամից զանգահարեց 911: Կանչով ժամանած բժիշկները դերասանուհու մոտ արձանագրեցին շատ ծանր վիճակ: Բոլոր փորձերը, տեղում և հիվանդանոց տանելու ճանապարհին վերակենդանացնել Բրիթնիին ապարդյուն եղան: Նրան տեղափոխեցին էլիտար կլինիկա Cedars Sinai Medical Center, որտեղ հիմնականում դիմում են հոլիվուդյան աստղերը: Սակայն օգնությունը ուշացավ, Բրիթնի Մերֆին մահացավ սրտի կանգից, միանգամից կլինիկա ընդունվելուց հետո՝ ժամը 10:04:

32-ամյա դերասանուհու հուղարկավորությունը տեղի ունեցավ 2009 թվականի դեկտեմբերի 24-ին Հոլիվուդյան բլուրներում:

Դատաբժշկական էքսպերտները, իրականացնելով բոլոր անհրաժեշտ պրոցեդուրաները, հայտնեցին, որ դերասանուհու սրտի կանգի պատճառը թոքերի բորբոքումն էր, բարդացած դեղորայքային պրեպարատների գերդոզավո-

→

KRIMINAL Jam
ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

SHANT ARTN

Տեղեկությունների համար զանգահարել՝
818. 900 - 4455

Հաղորդաշարում գովազդներ տեղադրելու կամ հաղորդումը հովանավորելու համար զանգահարեք
818. 572-6634

Կրիմինալ ժամ ամսագիրը,
Հայաստանի Հանրապետության Ոստիկանությունը
և SHANT TV-ին համատեղ ներկայացնում են

«Կրիմինալ ժամ» հաղորդաշարը

Յուրաքանչյուր շաբաթ ժամը 1:00 PM
և երկուշաբթի ժամը 7:30 AM

Հեռուստահաղորդումները պատրաստվում են բացառապես միայն իրական դեպքերի և իրական կադրերի հիման վրա: Տեսանյութերը տրամադրվում է ՀՀ Ոստիկանության արխիվից:

րումից, երկաթդեֆիցիտային անեմիայի ֆոնի վրա: Լոս Անջելեսի առողջապահության նախարարությունը գրտնում է, որ մահվան պատճառը դարձավ սնկիկը, առաջ բերելով պնեվմոնիա:

Իմանալով Բրիթնիի մահվան մասին Էշտոն Կատչերը իր բլոգում գրեց -Այսօր աշխարհը կորցրեց լույսի մի ճառագայթ: Իմ խորին ցավակցություններն եմ հայտնում Բրիթնիի ընտանիքին, նրա ամուսնուն և հիանալի մայր Շերոնին…Կտեսնվենք մյուս կողմում փոքրիկս:

Բրիթնիի ամուսնու, այժմ հանգուցյալ Սայմոնի պատմելով, Մերֆին կանխազգում էր իր մահը.

Մահանալուց մի քանի օր առաջ Բրիթնին հիվանդացավ և մենք խնդրեցինք նրա մայրիկին գալ մեզ մոտ: Շերոնը արգանակ էր բերել և նստել էր նրա անկողնուն: Երբ Բրիթնին քնեց, ես Շերոնին խոհանոցում պատմում էի մեր տեղափոխման և երեխաներ ունենալու մասին:

Մենք նույնիսկ արդեն անուններ էինք ընտրել ապագա երեխաների համար: Երբ Բրիթնին արթնացավ նրան օդը չէր բավականացնում: Շերոնը առաջարկեց նրան դուրս գալ փողոց: Բրիթնին նրան ասաց.

-Մամ ես մեռնում եմ: Ես սիրում եմ քեզ:

Աշխարհի Հզոր Աղետների Պատմությունից

Վայոնտի աղետը

Լեռներում սողանքների եւ ձնահյուսերի դեպքերը հաճախ այս կամ այն բնական երեւույթի՝ երկրաշարժի, հրաբխի կամ տաքացման հետեւանք են: Սակայն ձնահյուսերի պատճառ կարող է դառնալ նաեւ մարդու գործունեությունը, երբեմն անգամ սովորական արձագանքը:

Այսպես, օրինակ, առաջին աշխարհամարտի ժամանակ, երբ մարտական գործողությունները հասել էին Ալպեր, հրանոթների թնդյունից լեռներում տեղաշարժվել էին ձյան հսկայական շերտեր, որոնք մահաբեր ձնահյուսերի պատճառ դարձան:

Լեռնային շրջաններում ապրող մարդիկ, ծանոթ լինելով ձնահյուսերի նենգությանը, աշխատում են չաղմկել վըտանգավոր վայրերում, իսկ հնարավորության դեպքում՝ շրջանցել դրանք:

Սակայն 1963 թվականին Ալպերի մերձակայքում՝ ժայռոտ ափերով օղակված Պյավա գետի հովտում, որը հայտնի է դարձել Հեմինգուեյի "Հրաժեշտ զենքին" վեպի շնորհիվ, տեղի ունեցավ իսկական ողբերգություն: Այս բուռն գետի սկզբնամասում, Վենետիկից հյուսիս, 1960 թվականին, անտեսելով տեղի բնակիչների բողոքները, կառուցվել է Վայոնտ անունը կրող հզոր ամբարտակը, որն ուներ 265 մետր բարձրություն:

Ամբարտակի լայնությունը հասնում էր քսան մետրի: Այդ տարիներին Վայոնտը համարվում էր աշխարհի ամենա -բարձր ամբարտակներից մեկը: Այն տեսնելու համար Պյավայի հովիտ էին գալիս աղմկոտ ու հետաքրքրասեր զբոսաշրջիկների բազմաթիվ խմբեր:



Ամբարտակը կառուցվել էր այնպիսի հաշվարկով, որ Վայոնտը դիմանա ոչ միայն ջրի ճնշմանը, այլեւ հնարավոր երկրաշարժի հարվածներին: Մինչ շինարարությունն սկսելն իրականացվել են մանրազնին երկրաբանական հետազոտություններ, որոնց արդյունքում որոշվել է, որ սողանքների մեծ վտանգ չկա: Տեղաշարժվել կարող են միայն փխրուն նստվածքները, որոնց ծավալը չի գերազանցի կես միլիոն խորանարդ մետրը, իսկ նման խոշոր ամբարտակի համար այդ թիվը լուրջ վտանգ չի ներկայացնում:

1963-ի հուլիսին, երբ ջրամբարը լցված էր ջրով, Մոնտե Տոց լեռան լանջին արագացավ փխրուն ապարների դանդաղ տեղաշարժը: Հոկտեմբերի 1-ին մարդիկ նկատեցին, որ լեռան լանջից կենդանիներ են փախչում: Մեկ շաբաթ անց փխրուն նստվածքների տեղաշարժն էլ ավելի արագացավ, եւ արդեն հոկտեմբերի 9-ին լեռան լանջն իջավ մոտ 30 սմ-ով: Սրան ավելացավ նաեւ հորդառատ անձրեւը: Ամբարտակի մերձակայքում գտնվող գյուղի բնակիչները լրջորեն մտահոգված էին ստեղծված իրավիճակով, սակայն տարահանման վերաբերյալ պաշտոնական կարգադրություն այդպես էլ չստացվեց:

Հոկտեմբերի 9-ի ուշ երեկոյան Մոնտե Տոց լեռան կողմից լսվեց ուժեղ հարվածների ձայն, որից հետո լեռան լանջը փլվեց: Ոչ թե կես միլիոն (ինչպես ենթադրվում էր), այլ մոտ երկու հարյուր միլիոն խորանարդ մետր հող, քարեր ու ապարներ 100 կմ/ժ արագությամբ թափվեցին ջրամբար: Քարե հոսքը, դուրս գալով ամբարտակից, նետվեց լեռան դիմացի լանջի վրա՝ բարձրանալով մինչեւ 130 մետր:

Առաջացած ալիքը դուրս թափվեց ամբարտակից եւ վայր ընկավ 400 մետր բարձրությունից: Նախ ջրի հսկայական զանգվածը հեղեղեց ու ամայացրեց Սան Մարտինո գյուղը: Մոնտե Բուրգո լեռան ստորոտում գտնվող Կասսո բնակավայրն ամբողջությամբ ջնջվեց երկրի երեսից:

Հարվածի ալիքն ուղղակի քշեց-տարավ բարձրադիր վայրերում կառուցված եւ ջրից զերծ մնացած տները:

Վայոնտից դուրս եկած ալիքը 165 մետր բարձրություն ուներ, սակայն ամբարտակին այն ոչ մի վնաս չէր հասցրել:

Քառասուն միլիոն խորանարդ մետր ջուր հորդաց Պյավա գետի հովիտ: Դրա ճանապարհին առաջին զոհը Լոնգարոնե փոքրիկ քաղաքն էր: Լոնգարոնեում ոչ մի տուն կանգուն չմնաց, բոլոր բնակիչները զոհվեցին: Անհույս վիճակում էին հայտնվել նաեւ մյուս բնակավայրերի բնակիչները: Մեկը մյուսի հետեւից ջուրը ոչնչացրեց Ռիվալտու, Պիրագո եւ Վիլանովու գյուղերը, եւ այս ամենի համար պահանջվեց ընդամենը 15 րոպե: Հեղեղելով հսկայական տարածքներ՝ ջուրը թողեց միայն ավերակներ եւ մոտ երեք հազար մարդու դիակ: Այս աղետը սեփական աչքերով տեսածներից ոչ մեկը ողջ չմնաց: Զոհվածների դիակները գտնում էին նույնիսկ օրեր անց՝ ամբարտակից 80 կմ հեռավորության վրա:

Աղետից հետո պարզվեց, որ ջրամբարը կիսով չափ լցված է փխրուն ապարներով ու քարերով: Այսպիսով, Վայոնտի ամբարտակն այլեւս պիտանի չէր հետագա շահագործման: Հետո, իհարկե, մի շարք մասնագետներ եկան այն եզրակացության, որ ամբարտակի կառուցման վայրն անհաջող էր ընտրված:

ԿԻՆ ԵՎ ՏՂԱՄԱՐԴ (18+)

Սեռական կյանքը ոչ միայն հաճելի է, այլև օգտակար

Սեռական կյանքը մեզ ոչ միայն պարգևում է հաճելի պահեր, այլև օգտակար է առողջությանը: Ահա մի շարք խնդիրներ, որոնք կարելի է լուծել սեքսի միջոցով: Եվ սա դեռ ամենը չէ:

Ամրապնդել առողջությունը

Հաբեր կուլ տալու ու նորանոր հիվանդություններ հայտնաբերելու փոխարեն, անցիր պրոֆիլակտիկ միջոցառումներին՝ սիրո անմիջական պրոցեսին:

Գիտնականների վերջին հետազոտությունների համաձայն՝ սեքսն օգնում է կանխել մի շարք լուրջ հիվանդությունների զարգացումը:

Պարբերական սեռական հարաբերությունները կանխարգելում են սրտամկանի ինֆարկտը: Սեռական ակտի ժամանակ սրտամկանը մարզվում է և բարելավվում է արյան բաղադրությունը, քանի որ գրգռվածության պահին մեծանում է էրիտրոցիտների քանակը. ահա թե ինչով է բացատրվում այտերի կարմրությունը:

Ուժեղ գլխացավը նույնպես սիրելիի հետ միասին անկողնում հայտնվելու առիթ է: Ուսումնասիրությունները վկայում են, որ կես ժամանոց սեքսն օրգանիզմի վրա նույն կերպ է ազդում, ինչպես անալգինի երկու հաբը.

դա տեղի է ունենում ուրախության հորմոն էնդորֆինի շնորհիվ, որը սկսում է արագ կերպով արտադրվել օրգանիզմում մտերմության ժամանակ և արգելափակում ցանկացած ցավի օջախ: Էնդորֆինի հետ մեկտեղ ազդում է էստրոգենը՝ վերացնելով տհաճ նախադաշտանային ցավրերը փորի ներքնի հատվածում:

Առողջ սեռական ախորժակը դրական ազդեցություն ունի նաև սովորական ախորժակի վրա: Սեքսն օգնում է կարգավորել ածխաջրային փոխանակումը, քանի որ այդ ժամանակ գեղձերը սինթեզում են երկու անգամ ավելի շատ ինսուլին: Դա իհարկե չի նշանակում, որ ակտիվ սեռական կյանքի պայմաններում կարելի է սնվել բացառապես կոնֆետներով ու թխվածքաբլիթներով, սակայն բուռն գիշերվանից հետո՝ առավոտյան նախաճաշը կրուասանով կարող ես վայելել առանց խղճի խայթի:

Ի վերջո, սեքսը պաշտպանում է գրիպից և մրսածությունից: Շաբաթական գոնե երկու անգամ սեքսով զբաղվելու դեպքում՝ վնասակար վիրուսների մուտքը դեպի օրգանիզմ արգելափակող իմունոգլոբուլին A-ի քանակն ավելանում է մոտ 30 %-ով: Իհարկե, անգամ ամենակրքոտ շոյանքները չեն կարող փոխարինել պատվաստումը, սակայն միավորվելով համբույրների հետ, որոնց ժամանակ զուգընկերները փոխանակվում են առնվազն 40 000 նոր օգտակար բակտերիաներով, դրանք էապես մեծացնում են գրիպի վարակից զերծ մնալու շանսերը:

Լիարժեք հանգստանալ

Հրաժարվում ես սիրո գիշերից, որովհետև ստիպված ես առավոտյան վաղ արթնանալ և ուզում ես կարգին հանգստանալ պատասխանատու հանդիպումից առաջ. շատ իզուր: Սեքսն ազդում է օրգանիզմի վրա ցանկացած քնաբերից էլ լավ, անգամ եթե դրան հաջորդող րոպեների

→

ընթացքում թվում է, թե քունդ փախել է: Իրականում, նյարդային վերջավորությունների միջոցով ուղեղն արդեն ստացել է հանգստի հրահանգը, քանի որ դու ֆիզիոլոգիական մակարդակի վրա լիցքաթափում ես ստացել: Իսկ քո թվացյալ գրգռվածությունը պարզապես երջանիկ պահերի հետ կապված ուրախության ալիքն է: Այնպես որ, ոչ մի բանի մասին մի մտահոգվիր, պառկիր հարմար, և ...

Կապվածություն ստեղծել

Ժամանակի հետ կրքերը թուլանում են: Դա փաստ է. բոլոր դիրքերը փորձարկված են, դուք կարող եք գտնել միմյանց էրոգենային զոնաները փակ աչքերով: Սակայն բաժանման և նոր տպավորություններ փնտրելու պատճառը ոչ թե սեռական հարաբերությունների երկարատևությունն է, այլ ոչ հաճախակի սեքսը:

Շարունակական սեռական կյանքով ապրող զույգերի մոտ, անկախ համատեղ կյանքի երկարությունից, միմյանց նկատմամբ կապվածությունը ձևավորվում է հորմոնային մակարդակի վրա: Այդ կապվածության համար, ինչպես վկայում են Կալիֆոռնիայի համալսարանի հետազոտությունները, պատասխանատու է օքսիտոցին հորմոնը: Այնպես որ, եթե քո ծանոթներից որպես բաժանման պատճառ լսում ես՝ «սեռական կյանքը սովորություն էր դարձել», ապա այդ բառերի տակ պետք է հասկանալ՝ «սեքսի պակաս»:

Զգել մարմինը

Չափավոր ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, որը ստանում ես զուգընկերոջդ հետ նոր դիրքերում հմտանալիս, օգնում է ազատվել ավելորդ կիլոգրամներից:

Ապացուցված է, որ հանդարտ սեքսի մեկ րոպեի ընթացքում օրգանիզմում վառվում է մոտ 4 կկալ, իսկ կրքոտ սեքսի ժամանակ՝ մինչև 8 Կկալ: Այսպիսով, մոտ կես ժամանոց ակտիվ «մարզումների» ընթացքում դու կարող ես կորցնել ամբողջ 240 կկալ. դա մոտավորապես մեկ տուփ չիպս է կամ շոկոլադե տորթի մեծ կտոր: Ի դեպ, ավելորդ քաշը շատ հաճախ բերում է սրտանոթային հիվանդությունների առաջացման: Ուստի, սեքսի ընթացքում նիհարելը ևս մի ներդրում է քո առողջության ամրապնդման գործում:

Մարզել սիրտը

Շոյանքների ժամանակ սիրտը երբեմն այնքան արագ է բաբախում, որ թվում է, թե չի դիմանա ու դուրս կթռչի կրծքավանդակից: Իրականում, այդ ծանրաբեռնվածությունը համանման է մարզումների ժամանակ ստացած ֆիզիկական ծանրաբեռնվածությանը: Սեքսի ժամանակ զարկերակն արագանում է միջինում մինչև 100 հարված վայրկյանում, երբեմն՝ մինչև 180 հարված, և դա միայն քո օգտին է. մարզվում է սրտամկանը, ուստի մեծանում

են նրա դիմացկությունը, կենսական ուժն ու կյանքիդ տևողությունը:

Բարձրացնել տրամադրությունը

Ինչպես պարզել է Քուինսլենդի ուղեղի ինստիտուտի պրոֆեսոր Թոնի Բարլեթը, սեքսի ժամանակ արտադրվող պրոլակտին հորմոնն ազդակներ է ուղարկում ուղեղ՝ հենց հաճույքի կենտրոն, և քո տրամադրությունն ինքնաբերաբար լավանում է և մնում բարձր՝ անկախ օրգազմ ապրելու փաստից: Ստաբիլ սեռական կյանքն օգնում է պահպանել հորմոնային բալանսը, և քիչ թե շատ միանըման լավ տրամադրությունը: Եթե անգամ առկա լինեն տրամադրության պոռթկումներ, ապա՝ միայն դրական:

Լիցքաթափվելուց հետո դու թեթևություն ես զգում մարմնով մեկ. այսպիսի «ֆիթնեսի» շնորհիվ ընկնում ես երանության գիրկը և չես ուզում փչացնել այդ ամենը բացասական հույզերով:

Ի դեպ, եթե նկատել ես, սիրային շոյանքներից հետո հաճախ պատրաստ ես փոքրիկ խենթություններ գործել, օրինակ՝ լիաձայն երգել, թեև մինչ այդ ամաչում էիր, կամ թխել հրաշք տորթ տատիկի բաղադրատոմսով, որն անմիջապես հիշում ես՝ չնայած մեծ հուզվածությանը: Սեքսը բարելավում է հիշողությունը: Գերագույն հաճույքի պահին օրգանիզմում մեծանում է ադրենալինի և կորտիզոլի քանակը, որոնք խթանում են գորշ մասսայի աշխատանքը: Այսպիսի եզրակացության է եկել Համբուրգի բժշկական համալսարանի հետազոտող Վերներ Հաբերմելը:

Ծաղկել վարդի պես

Բոտոքսից ավելի լավ միմիկական կնճիռների դեմ պայքարում է միայն սեքսը: Օրգազմի ժամանակ ձվարաններում տեղի է ունենում էստրոգենի արագացված սինթեզ,

→

ինչը նպաստում է բջիջների վերականգնմանը և խթանում մաշկի երիտասարդությունն ապահովող կոլլագեն սպիտակուցի արտադրությունը: Հորմոնների ազդեցության տակ բացվում և մաքրվում են մաշկի ծակոտիները՝ ազատելով կոսմետոլոգին այդքան հաճախ այցելելու անհրաժեշտությունից:

Ի դեպ, սեքսի նախաբանը՝ համբույրների տեսքով, նույնպես դրական է ազդում քո արտաքինի վրա. երբ դու շուրթերով ու լեզվով ձգվում ես դեպի զուգընկերդ, ակտիվ աշխատում են մոտ 34 դեմքի մկաններ. այդպիսի մարզանքը պահում է մաշկը տոնուսի մեջ:..cosmo.am

ՀԱՅՏՆԻ ՀԱՅԵՐ

ՀԱՍՄԻԿ ՊԱՊՅԱՆ

Օպերային երգչուհի, սոպրանո

Ծնվել է 1961թ. սեպտեմբերի 2-ին, Երևանում: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան՝ նախ որպես ջութակահար, ապա՝ որպես երգչուհի: Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալե -տի ազգային ակադեմիական թատրոնում իր դեբյուտից հետո, հրավիրվել է Բոննի և Դյուսելդորֆի օպերային թատրոններ՝ որպես մեներգչուհի: Այդ ժամանակից ի վեր ելույթներ է ունեցել բազմաթիվ թատրոններում, այդ թվում աշխարհի ամենահեղինակավոր օպերային բեմերում և համերգային սրահներում՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» օպերա և «Կարնեգի Հոլլ», Սան Ֆրանցիսկոյի օպերա, Վաշինգթոնի Ազգային օպերա, Միլանի «Լա Սկալա», Փարիզի «Բաստիլ» օպերա, Բարսելոնի «Լիսեու» մեծ թատրոն, Մադրիդի թագավորական թատրոն, Լոնդոնի «Վիգմոր Հոլլ», Վիեննայի պետական օպերա, Ամստերդամի «Նիդեռլանդական» օպերա, Ցյուրիխի օպերա, Սանկտ Պետերբուրգի «Մարինինյան» թատրոն, ինչպես նաև Մյունխենի, Շտուտգարտի, Համբուրգի, Դրեզդենի և Բեռլինի պետական օպերաներ: Երգում է Մոցարտի, Ռոսսինիի, Հալևիի, Բիզեի, Պուչինիի, Չայկովսկու, Վագների, Վերդիի ստեղծագործություններից: Մասնակցել է բազմաթիվ աշխարհահռչակ օպերային փառատոնների: Կատարումներ է ունեցել շատ նշանավոր դիրիժորների հետ: Իր մենահամերգների ժամանակ ակտիվորեն ներկայացնում է նաև հայ կոմպոզիտորների երաժշտությունը՝ Կոմիտաս, Չուխաճյան, Տիգրանյան, Տերտերյան, Մանսուրյան և այլն: 2004թ. արժանացել է ՀՀ ժողովրդական արտիստի կոչմանը:

2005թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից պարգևատրվել է «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանով՝ որպես «Ամբողջ աշխարհում Հայաստանի մշակութային դեսպան»: 2006թ. թողարկել է թվային ձայնասկավառակ Կոմիտասի 36 երգերով՝ այդ թվում նաև գերմանական պոեզիայով գրված ինը երգերը, որոնք ընդհանրապես կատարվել են առաջին անգամ: Այժմ ապրում է Վիեննայում:

Խաղացանկ

Նրա խաղացանկը ներառում է՝ Մոցարտի Դոննա Աննա («Դոն Ջիովաննի»), Ռոսսինիի Մաթիլդա («Վիլհելմ Տելլ»), Հալևիի Ռաքել («Ջհուդուհի»), Բիզեի Միկաելա («Կարմեն»), Պուչինիի Միմի («Բոհեմ»), Մագդա («Ծիծեռնակ»), «Տոսկա», «Մադամ Բատերֆլայ», Բոյտոյի Մարգարիտ / Ելենա («Մեֆիստոֆել»), Չայկովսկու Լիզա («Պիկովայա դամա»), Ռիխարդ Վագների Սենտա («Թռչող հոլանդացի»), նաև Վերդիի տասներկու դերերը՝ «Տրավիատա», Դեզդեմոնա («Օթելլո»), «Աիդա», Լեոնորա («Տրուբադուր» և «Ճակատագրի ուժը»), Ելիզավետա («Դոն Կարլոս»), Ելենա («Սիցիլիական ժամերգություն»), Ամելիա («Սիմոն Բոկանեգրա»), Էլվիրա («Էրնանի»), «Լեդի Մակբեթ», Էբիգեյլ («Նաբուկկո»), Օդաբելլա («Աթիլլա»), ինչպես նաև Ռեքվիեմը: Պապյանի ռեպերտուարի կենտրոնական մասն է Բելլինիի «Նորման», ի թիվս այլոց այդ դերով նա հանդես է եկել Վիեննայի ազգային օպերայում, Թուրինի թագավորականում, Մոնրեալում, Բալթիմորում, Դեթրոյթում, Դենվերում, Վաշինգտոնում, Նյու Յորքի Մետրոպոլիտեն օպերայում, Մարսելի, Մոնպելյեի օպերաներում, օպերային փառատոներին՝ Օրանժում (Հարավային Ֆրանսիա), Սիցիլիայում, Մանհայմում, Շտուտգարտում, Ռոտերդամում Ամստերդամի Նիդերլանդական օպերան: Ամստերդամի կատարումը 2006 թ-ի հոկտեմբերին թողարկվել է թվային տեսասկավառակ (DVD) տարբերակով: 2009 թ-ի հունվարից, նա իր խաղացանկին ավելացրել է ևս մի հիանալի դերակատարում՝ Եղիսաբեթ Ա թագուհի Դոնիցետտիի «Ռոբերտո Դևերոյում» (դեբյուտը Դալլասի օպերայում).

Այգի շենքի տանիքին, Չիկագո

Հետաքրքիր Փաստեր

Ինչպես նշում է՝ pattayadailynews.com-ը `«Ամենաերկար համբույրի» մրցույթը անցկացվել է 2011թ.-ին, Սուրբ Վալենտինի օրը Թայլանդում: Մրցույթին կարող էին մասնակցել բոլոր ցանկացողները: Համաձայն մրցույթի պայմանների՝ զույգերը պետք է կանգնած համբուրվեին և ամենակարևորը պետք է շրթունքները չբաժանվեին ոչ մի վայրկյան: Մասնակիցները չէին կարող քնել, նստել և իրենց բնական պահանջները պետք է բավարարեին միասին՝ վերահսկողի ներկայությամբ:

Մրցույթին մասնակցում էին 14 զույգ, որոնցից 7-ը գերազանցեցին նախորդ մրցույթի ռեկորդը՝ 32 ժամ 7 րոպե 14 վայրկյան: Մրցույթը հաղթեց ամուսնական զույգը, ովքեր անդադար համբուրվեցին 46 ժամ 24 րոպե 9 վայրկյան:

Նրանց արդյունքը գրանցվեց Գինեսի ռեկորդների գրքում և, որպես հաղթողներ՝ նրանք արժանացան դրամական պարգևի:

Ի սկզբանե սիրված մուլտհերոս Վինի Թուխի անունը եղել է «Էդուարդ արջ» (Edward Bear): «Վինի Թուխի արկածները» գրքի հեղինակ Ալան Մալին իր որդու ծննդյան օրվա առթիվ նրան նվիրել է արջուկ ու քանի որ երեխան դեռեւս չէր կարողանում խոսել, Ալանը արջուկին տվել է Էդուարդ անունը: Երեք տաի անց, երբ նրանք զբոսնելիս են լինում կենդանաբանական այգում, երեխային միանգամից գրավում է Վիննիպեգ անունով մի արջ, ինչի կապակցությամբ Էդուարդ անունով խաղալիքը վերանվանվում է Վինի: Հետագայում եւ ստեղծվում է «Վինի Թուխի արկածները» գիրքը:

→

Ամսագրի բաժանորդագրության համար կարող եք զանգահարել 323.383.7385

THE ARMENIANS
MAGAZINE
ՀՐԱՏԱՐԱԿԻՉ HRD/INN MEDIA GROUP
Գլխավոր Խմբագիր
ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
118 W. Stocker St.,.
GLENDALE, CA 91202
Direct:(818) HRD - 0880



PAYROLL
ACCOUNTING

LA TAX PROS
David Ayvazyan
Master Tax Advisor

118 W. Stocker St
Glendale, CA 91202
Office 818.921.6869
Fax 818.781.8625
www.LATaxPros.com

TAX PREPARATION
IRS SETTLEMENTS

Ձեր գովազդը ամսագրում տեղադրելու
համար կարող եք զանգահարել

323. 383. 7385

H.R.D. Immigration Services

Registration # LDA - 548

118 W. Stocker Street, Glendale, CA 91202
Tel: (323) 383-7385 Fax: (818) 396-0570

Գաղթականական և Իրավական Փաստաթղթերի Ձևակերպման Կենտրոն

Մեր ծառայությունները

Քաղաքացիություն
(Citizenship)

Գրին Քարտ
(Green Card)

Ապաստանի իրավունք
(Asylum)

Ընտանիքի միավորում
(Family petition)

Աշխատանքի իրավունք
(Work permit)

Ճամփորդական անձնագիր
(Travel document)

Կարո Կարապետյան

Սնանկացում
(Bankruptcy, chapter 7)

Ամուսնալուծություն
(Divorce)

Թարգմանչական Ծառայություններ
(Հայերենից Ռուսերեն, Անգլերեն, Իսպաներեն, Ռումիներեն և հակառակը)

Ապոստիլ
Apostil

Միջազգային վարորդական իրավունք
(International Driver License)

Ուշադրություն

Ցածր եկամուտ (low income) ունեցողները ազատվում են պետական տուրքի վճարումից

Սույն դիմումնագրերը, ինչպես նաև այլ տիպի դիմումնագրերը՝ որոնց ձևակերպումը պարտադիր չէ հատուկ արտոնագիր ունեցող անձի կամ կազմակերպության կողմից, կարող եք ձևակերպել մեր գրասենյակի օգնությամբ: **H.R.D. IMMIGRATION SERVICES** փաստաթղթերի ձևակերպման գրասենյակի ծառայություններից օգտվելու համար կարող եք զանգահարել կամ այցելել մեր գրասենյակ, ինչպես նաև հաղորդագրություն ուղարկել կազմակերպության էլեկտրոնային հասցեով կամ Ձեր հաղորդագրությունը թողնել ինտերնետային կայքում:

We are open Monday - Friday 10:00am - 8:30pm, Saturdays 11:30pm-4:30pm

Call us for more information

Հասցեն: 118 W. Stocker Street, Glendale, CA 91202
Հեռախոս: (323) 383-7385, Ֆաքս: (818) 396-0570
Web: **www.iamemigrant.com,** Email: office@iamemigrant.com

323.383-7385

EKG | BREATING TEST | MASSAGE | PHYSICAL THERAPY NERVE CONDUCTION STUDY



WE ARE ACCEPTING PRIVATE INSURANCE: MEDICARE, MEDICAL, TRANSPORTATION IS PROVIDED

Tel: (818) 242-4860
Tel: (818) 242-4419

705 IVY STREET
GLENDALE, CA 91204

OMAR E. ESPINOSA, M.D. - Neurology

First Smile
HOME HEALTH CARE, INC.

Home Care from Someone You Can Trust

GIVE US A CALL FOR INQUIRIES:
(818) 951-1565

Services OFFERED

- Skilled Nursing
- Physical Therapy Services
- Occupational Therapy
- Speech Therapy
- Medical Social Worker
- Home Health Aide
- Personal Care
- Durable Medical Equipment

Why Choose Us

The **First Smile Home Health Care, Inc.** Advantage
You can expect professional services at **First Smile Home Health Care, Inc.** - brought straight to you at home by well-trained and experienced staff.

Welcome to
First Smile Home Health Care, Inc.

We formed the First Smile team to serve you and your family in Los Angeles, Ventura, San Bernardino, Riverside and Orange County. Like you, many of our clients prefer their own homes to be the setting for recovery or retirement. We tailor fit our services to suit your needs. This has been our business for years and we will continue a legacy of excellence because our vocation lies in serving you at home.

Please call **First Smile Home Health Care** at (818) 951-1565 to inquire about enrolling yourself or your loved one in one of our home health care programs.

THE ARMENIANS

118 W. Stocker Street

Glendale, CA 91202

Tel: (818) 473 - 0880 | Fax: (818) 369 - 0570

E-mail: thearmenians@yahoo.com

Subscribe for Free at www.thearmeniansmag.com

HUMAN RIGHTS DEFENSE

Հրատարակիչ՝ **HRD | I.N.N. Media Group**

Գլխ. Խմբագիր՝ Կարո Կարապետյան

Ձևավորումը՝ Դավիթ Վարդանյան

Էջադրումը՝ Սոնա Ոսկերչյան

Տնօրեն՝ Գրիգորի Կարապետյան

I.N.N

HRD | International News Network